



«ՀԱՆԳՍՏԵԱՆ» ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ

Մեր ժամանակներում խաղաղությունը հրամայական պահանջ է համայն մարդկության համար: Ժամանակակից միջուկային զենքի կործանարար վտանգը ողջ մարդկությանը ստիպում է մտածել այդ մասին և գործել ընդդեմ այդ վերահաս չարիքի: Իսկ աշխարհի խաղաղությունը, բնականաբար, խաղաղությունն է նաև հայ ժողովրդի: Հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրել է ու մաքառել խաղաղ կյանքով ապրելու և ստեղծագործելու համար: Հաճախ, սակայն, հուսախաբվել է, ճնշվել ու զանգվածաբար կոտորվել բարբարոս ցեղերի ու ժողովուրդների կողմից: Այժմ, վերջապես, ապրում է մի խաղաղ ժամանակաշրջան: Թող այդ խաղաղ ժամանակաշրջանը տևական լինի:

Հոկտեմբերի 24-ին, շաբաթ օրը, կեսօրվա մոտ, Ս. Էջմիածնի Մայր տաճարը լեփլեցնում էր: Այստեղ էին գտնվում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հյուրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Ժամը 12-ին սկսվում է «Հանգստեան» ժամերգությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրույանի: Ժամերգության երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Մայր տաճարի դպրապետ Հայկ սրկ. Ֆրունջյանի:

Հավարտ «Հանգստեան» ժամերգության, համայն աշխարհում խաղաղության պահպանման անհրաժեշտության մասին բովանդակալից խոսք է ասում Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

«Խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն հեռաւորաց»:

Ամբողջ աշխարհում այսօր խաղաղության պայքարի օր է ընդդեմ միջուկային և կործանարար բոլոր տեսակի զենքերի: Նվիրական և օրհնյալ այդ սուրբ պայքարի սկիզբը ազդարարեցին հեռավոր Ծապոնիայի Հերոսիմա քաղաքի ժամը 12-ին հնչող զանգերը: Քաղաք, որը, ինչպես գիտեք, սիրելի հավատացյալներ, երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին նետված ատոմական ումբի պատճառով հրո ճարակ դարձավ, մոխրացավ ու փոշիացավ՝ առավել սոսկալի պատկերներ կայացնելով մարդկությանը, քան Աստվածաշնչական Սողոմն ու Գոմորը:

Հերոսիմայի զանգերը խաղաղության կոչի քաղցրահնչյուն դողաճները տարածելով ամբողջ աշխարհում, այս պահիս հասնում են նաև մեզ՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարում համախմբված հայորդիներին, քանզի մենք էլ հանուր հայության հիմնավորց այս սրբավայրում, Աստուծո և մարդկության առջև քրիստոնեական մեր պարտքն ենք կատարում՝ աղոթելով ու մաղթելով «Խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն հեռաւորաց»:

Խաղաղությունը սերմանելու ավետարանական պատվիրանը քրիստոնեության քարոզության առաջին իսկ օրերից սրբազան պարտականությունն է նկատվել յուրաքանչյուր քրիստոնյայի, որն այնքան անձկորեն և բարի ջանադրությամբ սպասում է երկրների արքայության հաստատմանը երկրի վրա: «Արքայութիւն երկնից ի մերքս ի ձեզ է», ընթերցում ենք Մարկոսի ավետարանում: Այս նշանակում է, սիրելի հավատացյալներ, որ յուրաքանչյուր քրիստոնյա աշխարհում պետք է աշխատի ի սեր այս միակ, անճաման Երկիր-մոլորակի, ինչպես

Սուրբ Գիրքն է մեզ պատվիրում, կտրելու, հեռացնելու այն անդամը, որը սպառնում է ապականել ողջ մարմինը: Իսկ արդ, այսօր ո՞վ մեզանից համոզված չէ, թե միջուկային զենքը վերջնական ոչնչացման ու մահու իրական սպառնալիք է ոչ միայն առանձին անհատների կամ ազգերի, այլև՝ Աստվածային ողջ արարչության, ամբողջ տիեզերքի:

Աշխարհում այսօր ամեն ոք գիտակցում է կարևորությունը և անհրաժեշտությունը կայուն խաղաղության: Խաղաղությունը կենսական ու համապագոյա աղոթքի նյութն է Հայ Եկեղեցու և հավատացյալ հայորդիների: Քանզի մեր հայրենի երկրում ամեն մի ավեր վանք, քաղաք, բերդ և կամ այլ շինություն տխուր վկայություններն են պատերազմական այն բազում արհավիրքների, որ տեսել է մեր ժողովուրդը իր անցյալի դարավոր պատմության ընթացքին: Հիշենք այստեղ, որպես թարմ օրինակ, տակավին չսպիացած մի վերք. դեռևս մեկ շաբաթ առաջ նետված իրանյան ռումբի հետևանքով Իրաքի հասրա քաղաքում ավերակույտի վերածվեց հայոց եկեղեցին:

Ահա թե ինչու, սիրելի հայորդիներ, մենք՝ ազգ և Եկեղեցի, ողջունում ենք ամեն մի ձեռնարկ՝ խոսք թե գործ, որ նպատակամղված է կայուն խաղաղություն հաստատելու երկրի վրա: Ահա թե ինչու հույժ մխիթարական է մեզ համար հաստատել այստեղ պալքարի աննկուն ոգին Խորհրդային մեր կառավարության խաղաղասիրական քաղաքականության, որը և ներշնչում է մեզ հավատքով, թե մեր երկրի 70-ամյա հոբելյանը խաղաղ կյանք ունենալու հույսի նոր հորիզոններ պիտի բացի համայն մարդկության առջև:

Խաղաղությունը, արդարև, առաջնային և գերակա խնդիրն է այսօր համայն մարդկության: Որովհետև, ինչպես օվկիանոսի վրա բարձրացած ամենադուրյգ ալիքն ան-

գամ տարածվում և զգալի է դառնում հանդիպակաց ափում, այնպես էլ աշխարհի ամենահեռավոր ծայրամասում բռնկված չարաղետ պատերազմը, թեև ոչ ատոմական, իրական վախ ու սարսափով է պատում հոգին աշխարհի հակառակ բևեռում ապրող մարդկության:

Այսօր, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, ահագանգի ուժգնությամբ են հնչում զանգերը Ս. Էջմիածնի, և մենք հավատում ենք, որ նրանց դողանքները միախառնվելով Հերոսիմայիում և աշխարհի տարբեր ծայրամասերում հնչող զանգերի ալիք առ ալիք մեզ հասնող ձայներին, միասնական թնդյունով պիտի կարողանան հորձանք տալ ու խորտակել զորությունը աշխարհափյուռ միջուկային չարաղետ զենքերի:

Մենք հավատում ենք նաև, որ աշխարհի բարի կամքի տեր մարդիկ զանգերի այդ դողանքները պիտի ընկալեն որպես կոչ՝ ի խնդիր աշխարհի խաղաղության իրենց վճռական խոսքն ասելու և իրենց նպատր քերելու, ամենայն պատասխանատվությամբ իրենց ձեռքը դնելու տիեզերքի օվկիանոսում լողացող մեր այս փոքրիկ Երկիր-մոլորակի դեկին, որպեսզի ոչ մի հողմ և անկեղծում չշեղի նրա ընթացքը դեպի խաղաղ նավահանգիստ, որպեսզի մեր բազմաչարչար երկիրը չտեսնի այլևս արյուն և արցունք, այլ միայն՝ ստեղծագործ աշխատանքի արդար պտուղներ, որպեսզի մենք և մարդկությունը համայն, այժմ և հավիտայն մեր հայացքները երկինք հառած, գոհություն և փառք մատուցանենք առ Աստված՝ խաղաղ կյանքի, շեն ու ծաղկող այգեստանների, քաղաքների և շենների համար:

«Խաղաղությո՜ւն ամենեցուն» դարերով սրբագործված նվիրական այս մաղթանքն է մեր՝ հոգևորականներին պատգամը այսօր ազգերին և պետություններին համայն:

